ԿԱՆԱԴԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ
EMBASSY OF THE REPUBLIC OF ARMENIA
CONSULAR DIVISION
7 DELAWARE AVE., OTTAWA, ONTARIO, K2P 0Z2
TEL. (613) 234-3710 FAX (613) 234-3444 E-mail: armconsottawa@mfa.am

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության դեսպանության միջնորդությամբ ՀՀ քաղաքացու անձնագիր կարող են ստանալ օտարերկրյա պետություններում մշտապես կամ ժամանակավորապես մնակվող այն ՀՀ քաղաքացիները, որոնք ձեռք չեն բերել այլ պետության քաղաքացիություն:

Անձնագրի դիմումնագրերն անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին ներկայացվում են Կանադայում Հայաստանի Հանրապետության դեսպանություն՝ հետագա ընթացք տալու համար: Անձնագրերը տպագրվում են ՀՀ ներքին գործերի (16 տարեկան և բարձր ՀՀ քաղաքացիների համար) կամ ՀՀ արտաքին գործերի (մինչև 16 տարեկան ՀՀ քաղաքացիների համար) նախարարությունների կողմից և դեսպանության միջոցով վերադարձվում դիմողին:

Անձնագրավորման գործընթացը տևում է 3-4 ամիս (16 տարեկան և բարձր ՀՀ քաղաքացիների համար) կամ 2-3 ամիս (մինչև 16 տարեկան ՀՀ քաղաքացիների համար):

ՀՀ անձնագիր ստանալու համար կատարվում են հետևյալ գանձումները.

1. առաջին անգամ անձնագրավորման կամ անձնագրի փոխանակման համար՝ 200 CAD* /մինչև 16 տարեկան երեխաների համար՝ 264 CAD* /200+64 անձնագիր ստանալու ձևողների համաձայնության համար//

2. կորսված կամ գողացված անձնագրի փոխարեն նորը ստանալու համար՝ 259 CAD* /մինչև 16 տարեկան երեխաների համար՝ 323 CAD* /259+64 անձնագիր ստանալու ձնողների համաձայնության համար//

Դիմումնագրերի ու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև լրացուցիչ պարզաբանումներ ստանալու նպատակով անհրաժեշտ է դիմել Դեսպանության հյուպատոսին վերը նշված հեռախոսահամարով:

* Ուշադրություն՝ Բոլոր սակագները ենթակա են փոփոխման առանց նախնական զգուշացման